Արձանագրություն N 2

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից **Հատուկ նշանակության մեքենաների** գնման նպատակով կազմակերպված թիվ **ԿԳԿԿԹԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/1** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան «19»-ը հունիսի, 2024թ.

սկիզբ՝ ժամը 09:00 րոպեին

ավարտ՝ ժամը 09:10 րոպեին

2024 թվականի հունիսի 18-ին ժամը 18:30-ին, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի գրավոր հանձնարարականի հիմքով, տեղի ունեցավ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցու 31, ՀՎՀՀ՝ 0084644, էլեկտրոնային փոստի հասցեն՝ atdf@atdf.am) կողմից Հատուկ նշանակության մեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ԿԳԿԿԹԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) արտահերթ նիստը, որին ներկա էին Հանձնաժողովի 4 անդամները՝

Հանձնաժողովի նախագահ ՝ Աշոտ Խաչատրյան

անդամներ՝ Արմեն Ավագյան, Արման Ասատրյան, Գայանե Քարիմյան

Նիստը նախագահում էր Աշոտ Խաչատրյանը, քարտուղարությամբ՝ Անահիտ Եղիազարյանի:

Նախագահը բացեց Հանձնաժողովի նիստը և հայտնեց, որ սույն նիստը հրավիրվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի գրավոր հանձնարարականի հիման վրա: Հայտարարեց, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Հանձնաժողովի նիստն իրավազոր է, այնուհետև՝ ներկայացրեց նիստի օրակարգը.

1. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.

Քննարկման և քվեարկման արդյունքում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0 ձայների մեծամասնությամբ

Որոշվեց

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.

1. Ընթացակարգը չեղյալ հայտարարելու մասին

2024 թվականի հունիսի 18-ին հատուկ նշանակության մեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԳԿԿԹԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) պատասխանատու ստորաբաժանման կողմից ստացվել է զեկուցագիր, ըստ որի անհրաժեշտություն է առաջացել չեղարկել Ընթացակարգը՝ նախահաշվային արժեքների փոփոխություններ կատարելու, ինչպես նաև այլ գնման հայտերի հետ միասին վերախմբավորելու և ընթացակարգը վերահայտարարելու նպատակով, որի

արդյունքում կողմ 4, դեմ 0 ձայների մեծամասնությամբ և ղեկավարվելով Կարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետով.

2. *Հանձնաժողովը որոշեց.*

2.1 Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, այն է՝ պայմանագիր չի կնքվել,

2.2 Հաստատել ԿԳԿԿԹԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/1 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության որոշումը՝ համաձայն հավելվածի:

Հանձնաժողովի նախագահ՝

Աշոտ Խաչատրյան _____

անդամներ՝

Արմեն Ավագյան _____

Արման Ասատրյան _____

Գայանե Քարիմյան _____

քարտուղար՝

Անահիտ Եղիազարյան _____